



USAID
FROM THE AMERICAN PEOPLE



ԵՅՏՎՈՒ
ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ
ԿԵՆՏՐՈՆ



ՆԱԽԻՐԱԿՅՈՒՄ ԵՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ
ԵՆԵՐԳԵՏԻԿԱԿԱՆ ԿԵՆՏՐՈՆ ԵՎ
ՍՏՐԱՏԵԳԻԱ

Հանձնաժողովի՝ քվեատուվի և հատուկ ծրարները հսկող անդամի գործառույթները

- ▶ Մշտապես պետք է գտնվեք ընտրական քվեատուվի մոտ:
- ▶ Պետք է վերահսկեք ընտրական քվեատուվը և հատուկ ծրարները:
- ▶ Պետք է փակ պահեք ընտրական քվեատուվի մեջ հատուկ ծրարը զցելու ճեղքը:
- ▶ Ընտրողին, քվեախցիկից դուրս գալուց հետո, պետք է ցուցում տաք, որ առանձին դրված սեղանից ինքնուրույն վերցնի մեկ հատուկ ծրար և նրա մեջ գետեղի ծալված քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
Պարզաբանեք ընտրողին՝ քվեարկելուց հետո օգտագործած գրիչը անհրաժեշտ է թողնել քվեարկության շենքում տեղադրված հատուկ տարայի մեջ:
- ▶ Նրանից հետո, երբ վստահ կլինեք, որ ընտրողի ձեռքին միայն մեկ հատուկ ծրար կա, պետք է բացեք քվեատուվի ճեղքը և ընտրողին ցուցում տաք, որ հատուկ ծրարը գցի ընտրական քվեատուվի մեջ:
- ▶ Հատուկ ծրարը ընտրական քվեատուվի մեջ զցելուց հետո խնդրե՛ք ընտրողին ազատել ընտրական տեղամասը:

Նկատի՛ ունեցեք.

- ✓ Միայն ընտրողն ունի քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ գետեղելու իրավունք: Բացառություն է «Ֆիզիկական վիճակ» ունեցող ընտրողը, որի փոխարեն նրա ներկայությամբ քվեաթերթիկը/քվեաթերթիկները հատուկ ծրարի մեջ է գետեղում և ծրարը քվեատուփի մեջ գցում նրա կողմից ընտրված անձը, որն օգնում է նրան քվեախցիկում լրացնել քվեաթերթիկը/քվեաթերթիկները:
- ✓ Թույլ չի տրվում ընտրական քվեատուփին միաժամանակ մեկից ավելի ընտրողի մոտենալը:
- ✓ Ընտրական հանձնաժողովի անդամն իրավունք չունի բացել լրացված քվեաթերթիկը:
- ✓ Մինչև ընտրողի կողմից քվեաթերթիկը հատուկ ծրարի մեջ գետեղելը՝ իրավունք ունեք նրանից պահանջել՝ Ձեզ ցույց տալ, որ ձեռքում սահմանված քանակությամբ քվեաթերթիկ (այնպես, որ չխախտվի քվեարկության գաղտնիությունը) և մեկ հատուկ ծրար կա: Ընտրողը պարտավոր է կատարել այդ պահանջը: